


ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀՆԱՏԻՊ ԳՐՔԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Վենետիկում,
Ամստերդամում,
Տրիեստում,
Լիվոռնոյում,
Մարսելում,
Լոնդոնում, Հռոմում,
Փարիզում տպագրված
հնատիպ շքեղ ու
արժեքավոր գրքերի
ցուցադրություն էր
այսօր
կազմակերպվել Հայաստանի ազգային գրադարանի
Անձեռնմխելի

գրականության բաժնի ընթերցասրահում: «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի շրջանակում Անձեռնմխելի գրականության_բաժինը ցուցադրեց Ազգային գրադարանում պահվող եվրոպական երկրների հնատիպ գրականության հավաքածուի ամենահինատիպ նմուշներից՝ բաժնի աշխատակից Ասպրամ Աշուղյանի՝ Եվրոպայում հայ հնատիպ գրքի անցած ուղուն անդրադարձից հետո:



Ուրբաթագիրք՝ Վենետիկ : տպ. Հակոբ Մեղապարտի. 1512. - [124] էջ : 16 սմ.

1512 թվականին
Հակոբ
Մեղապարտի
հրատարակած
հայերեն առաջին
տպագիր գիրքը՝
«Ուրբաթագիրք»
աղոթագիրք-
բժշկարանը և
կազմակից
«Պարգատումարը»
՝ 1512թ.-ից մինչև
հաջորդ 36 տարվա
անշարժ
տոմարացույցը...


1584 թվականին Հռոմում տպագրված «Տոմար Գրիգորյան»-ը՝ Հռոմի Գրիգոր 13-րդ պապի կողմից հաստատված Նոր տոմարը՝ լատիներենից հայերեն թարգմանությամբ... Փարիզում շարվածքով տպագրված առաջին հայերեն գիրքը՝



1633-ին Կայսերական տպարանի հրատարակած Ֆրանցիսկ Ռիվոլայի «Բառագիրք Հայոց» հայերեն-լատիներեն բառարանը... Արևմտյան գիտնականի կողմից հայոց լեզվի առաջին ուսումնասիրությունը՝ հայագետ Անդրեաս Ակոլոթոսի «Արդիաս հայերեն»-ը (1680թ.), որը նաև Գերմանիայում՝ Լայպցիգում մինչև

1800թ. հրատարակված միակ հայերեն գիրքն է... 1784-ին Տրիեստում, Մխիթարյանների տպարանում տպագրված Եզովպոսի առակները...

Ահա համառոտ թվարկումը հայերեն արժեքավոր գրքերի, որոնք ցուցադրվեցին օտարալեզու հնատիպ գրքերի՝ հին հռլանդերենով Նիդերլանդների պատմության, գերմանացի մտածողների աշխատությունների, բրիտանական հրատարակությունների, օրինակ, Շեքսպիրի պիեսների 1625-ի՝ առաջին



հրատարակության ֆաքսիմիլե տարբերակի և շատ այլ գրքերի հարևանությամբ:

Ցուցադրվեց նաև հայ գրատպության նշանավոր կենտրոն Ամստերդամում՝ Ոսկան Երևանցու ղեկավարած տպարանում հրատարակված հայերեն առաջին տպագիր Աստվածաշունչը՝ Ոսկանյան Աստվածաշունչը՝ գերմանացի մեծանուն նկարիչ,

փայտափորագրող, գծանկարիչ Ալբրեխտ Դյուրերի նկարագրողումներով:



